# «ԱՅՍՕՐ ՄԵՆՔ ՆՇՈՒՄ ԵՎ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԸ»



***Անցած կիրակի՝ մայիսի 1-ին, Վիրահայոց թեմի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում, հավարտ կիրակնօրյա Սուրբ պատարագի, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը քարոզ խոսեց Աշխարհամատրան կամ Կանաչ կիրակիի մասին:***

*- Այսօր ուզում եմ բոլորիդ շնորհավորել օրվա տոնի կապակցությամբ, որն իրապես վերաբերում է ամեն մեկիս: Աշխարհամատրան կամ Կանաչ կիրակին նվիրված է քրիստոնեական եկեղեցու ձեւավորմանը, ուստի այսօր մենք նշում եւ շնորհավորում ենք եկեղեցու տոնը: Խոսքը մեր, աշխարհի բոլոր քրիստոնեական եկեղեցիների մասին է: Այդ է պատճառը, որ տոնը կոչվում է Աշխարհամատրան՝ կազմված լինելով աշխարհի մատուռ բառակապակցությունից: Մեր հայրերը տոնը կոչել են նաեւ Կանաչ կիրակի գեղեցիկ խորհրդանշական անվամբ, որովհետեւ կանաչը նշանավորում է ինչպես Եկեղեցու ծնունդ առնելը, այնպես էլ այն, որ Եկեղեցին մշտապես աճող, մշտապես զարգացող կառույց է:*

*Ահավասիկ այսօր եկեղեցականներս մեր ծառայողների շարքում եւս փոքրիկների ենք տեսնում, եւ թե այսօր նրանք, ապա վաղը, մյուս օրը նրանց երեխաներն են գալու: Սերնդափոխություն է լինելու, քանի որ Եկեղեցին նույնպես զարգացող, աճող օրգանիզմ է: Եվ երբ մենք անդրադառնում ենք օրվա խորհրդին՝ մտածելով եկեղեցու եւ հավատքի մասին, տեսնում ենք, որ որոշ հանգամանքներ այժմ փոխվել են: Այն ժամանակ, երբ առաքյալները գնացին քարոզելու, նրանք սիրով էին քարոզում եւ նրանց սիրով էին ընդունում: Քրիստոս նրանց ասել էր, եթե մի տեղ ձեզ սիրով չեն ընդունում, թոթափեք ձեր ոտքերի փոշին եւ հեռացեք այդ տեղից: Տեսեք, 12 հոգին, որ հետո դարձավ ենթադրենք 500 հոգի, կարողացան փոխել աշխարհում մի դրվածք, այսինքն՝ ստեղծեցին քրիստոնեությունը, որն այսօր համարվում է աշխարհի ամենամեծ կրոններից մեկը:*

*Այդ առաքյալները փոխեցին շատ ազգերի կյանքը: Եկեք ուղղակի հիշենք Ավարայրի ճակատամարտը եւ Վարդան Մամիկոնյանի խոսքերը, երբ ասում էին՝ «Քրիստոնեությունը դա մեր կրոնը եւ հավատքը չէ, Քրիստոնեությունը մեր մաշկի գույնն է»: Պատկերացնո՞ւմ եք. Հայաստանը ընդամենը 150-ամյա քրիստոնյա երկիր էր եւ այդ ընթացքում Քրիստոնեությունը այնպես էր արմատավորվել հայի մեջ, որ նա գնում էր մահանալու հանուն Քրիստոսի, եւ քրիստոնեությունը համարում էր իր մաշկի գույնը...*

*Հավատքը միայն Եկեղեցի հաճախելը, ծնկաչոք աղոթելը չէ: Հավատքը հոգեւոր կյանք ունենալն է, մարդը ոչ միայն պետք է ապրի իր ուտելիքը վաստակելու, իր գումարները ավելացնելու համար, նա պետք է ապրի նաեւ հոգեւոր կյանքով...*

*Եկեղեցին պետք է նրան, ով իր մեջ զգում է այդ հոգեւորը, ով ուզում է՝ իր երեխան ճիշտ դաստիարակվի, ով ուզում է՝ իր ընտանիքում խաղաղություն լինի, կենցաղային հարցերի շուրջ վեճեր եւ կռիվներ չլինեն:*

*Եկեք այդ հարցումները դնենք մեր առջեւ, տեսնենք, թե ի՞նչ սխալներ ենք գործում եւ գտնենք այդ սխալը ուղղելու ճանապարհը՝ յուրաքանչյուրս մեր պարագայում: Գնացեք ու մտածեք եւ փորձեք գտնել այդ ամենի պատճառներն ու տեղ գտած սխալները:*

*Թող Աստված ուժ եւ կարողություն տա բոլորիս, որպեսզի մենք կարողանանք այդ հարցադրումները ճիշտ առաջադրել եւ ճիշտ պատասխաններ ստանալ դրանցից յուրաքանչյուրին:*

*Թո'ղ Աստված օրհնի բոլորիդ, առողջություն, ուժ պարգեւի:*

*Աստված պահապան բոլորիդ:*

ԿՐԹԱԿԱՆ

# ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ՝ ԿԱՊՎԱԾ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ՀԵՏ

***Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ընդունած նոր կանոնակարգի համաձայն՝ դպրոցների աշակերտները կկարողանան էքսկուրսիա գնալ միայն 1 օրով՝ առանց գիշերակացի, իսկ էքսկուրսիայի վայրը պետք է լինի դպրոցի տարածքից առավելագույնը 150 կմ հեռավորության վրա:***

«Աշակերտների անվտանգությունից ելնելով՝ էքսկուրսիան պետք է իրականացվի միայն մեկ օրով՝ առանց գիշերելու: Տեղանքը պետք է ընտրվի այնպես, որ դպրոցից մինչեւ նշանակված վայր հեռավորությունը չգերազանցի 150 կմ-ը»- հայտնում են Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունից:

Դպրոցներին նախազգուշացվում է նաեւ, որ էքսկուրսիաների ընթացքում աշակերտներին արգելվի մոտենալ գետերին, ջրամբարներին, սողանքի ենթակա եւ այլ վտանգավոր տարածքներին:

Ինչպես նաեւ՝ կրթության եւ գիտության նախարարության պարզաբանմամբ՝ էքսկուրսիային մասնակցող մեծահասակների թվում պետք է լինի առնվազն մեկ անձ, ով տիրապետում է առաջին բուժօգնություն տրամադրելու հմտություններին:

ՄԱՅԻՍԻ 9-Ը՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐ

# ԿԱԽԱ ԿԱԼԱՁԵ. «ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻՆ ՏՐՎԵՑ 600 ԼԱՐԻԻ, ԻՍԿ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ՝ 300 ԼԱՐԻԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»

***Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեի հայտարարությամբ, ֆաշիզմի դեմ հաղթանակի օրվա կապակցությամբ, Թբիլիսիի քաղաքապետարանը ֆինանսական օգնություն է ցուցաբերել Երկրորդ համաշխարհային պատերազմի վետերաններին եւ այդ պատերազմում զոհվածների ընտանիքի անդամներին:***



Կախա Կալաձեի խոսքով՝ քաղաքապետարանի առողջապահության եւ սոցիալական ծառայությունների վարչությունը, «Պատերազմի վետերանների աջակցություն» ծրագրի շրջանակներում, 600 լարի է փոխանցել Երկրորդ համաշխարհային պատերազմի վետերաններին, իսկ 300 լարի՝ պատերազմում զոհվածների ամուսիններին:

Թբիլիսիի քաղաքապետարանի տվյալներով՝ քաղաքապետարանն ընդհանուր առմամբ օգնել է 130 մարդու: Փոխանցումն իրականացվել է վետերանների գործերի պետական դեպարտամենտի տրամադրած տվյալների բազայի հիման վրա:

# ...ԵՎ 21 ՏԱՐԵԿԱՆ ՂՈՒՇՉԵՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԶՈՐԱՀԱՆԴԵՍԻՆ

***Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, տարբեր ռազմաճակատներում շատ ու շատ զինվորներ, անցնելով կրակե բոցերի միջով, իրենց համարձակությամբ եւ սխրագործությամբ, ամենուրեք բարձր են հնչեցրել ռազմիկի անունն ու հեղինակությունը: Այդպիսի զինվորներից է եղել նաեւ Ծալկայի շրջանի Ղուշչի գյուղի երիտասարդ Ստեփան Հովհաննեսի Ղազարյանը: Ծնվել է հողագործի ընտանիքում: Միջնակարգ կրթությունն ստացել է ծննդավայրում, այնուհետեւ իր ազնիվ աշխատանքով աչքի է ընկել տեղի կոլտնտեսության՝ դաշտավարական-հողագործական բրիգադներից մեկում:***

1942թ. սկզբներին, դեռ 18 տարին չբոլորած երիտասարդ Ստեփան Ղազարյանը կամավոր մեկնում է բանակ: Հայկական 89-րդ դիվիզիայի 390-րդ հրաձգային գնդի կազմում՝ որպես դասակի հրամանատարի օգնական մասնակցել է Հյուսիսային Կովկասի պաշտպանությանը, Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերի մի շարք գյուղերի եւ քաղաքների, Թաման թերակղզու, Կերչի, Նովոռոսիյսկ եւ Սեւաստոպոլի ազատագրման մարտական գործողություններին եւ իր մարտական երթն ավարտել է Քյոնիգսբերգ քաղաքում:

Մեր սակրավորների կողմից, 1944թ. հունվարի 28-ին Կերչ քաղաքի Կատերլեգ գետի վրա, նոր կառուցված կամրջի արեւմտյան կողմի շենքերից մեկի՝ նկուղային հարկից թշնամին գնդացրային մահացու կրակ է թափում եւ արգելում է 89-րդ դիվիզիայի առանձին ստորաբաժանումների առաջխաղացումը: Սակայն, սերժանտ Ղազարյանը, առանց հրամանատարության թույլատվության, սողալով անցնում է Կատարլեգ գետի կամրջի վրայով եւ անսպասելիորեն դուրս է գալիս հիտլերականների գնդացրային կրակակետից 15-20 մետր հեռավորության վրա: Գերմանացի գնդացրորդը նկատում է դեպի իրեն մոտեցող սովետական զինվորին, ֆաշիստի մահաբեր գնդակները վրիպում են եւ չեն կարողանում կասեցնել Ղազարյանի առաջ շարժվելը. նա վիրավորվում է ոտքից, բայց ուշադրություն չի դարձնում, մահվան սարսափը աչքերին սողում է առաջ՝ դեպի թշնամու կրակակետը: Հաղթանդամ հայորդին, աներեւակայելի արագությամբ ձեռքը մեկնում է գնդացրի փողին, ամուր բռնում եւ ձգում է իրեն: Հանկարծակի եկած հիտլերականը գնդացրի փողը ուզում է ազատել նրա ձեռքերից, բայց ապարդյուն, անհավասար քաշքշուկից հետո հաղթող է դուրս գալիս սերժանտ Ստեփան Ղազարյանը: Նա ֆաշիստի ձեռքերից պոկում է գնդացիրը, ապա՝ ներքնահարկի այդ փոքր անցքից ներս նետելով նռնակը, լռեցնում է հիտլերականին:

Ստեփան Ղազարյանի այդ խիզախության շնորհիվ՝ 89-րդ դիվիզիայի ստորաբաժանումներն անցնում են Կատերլեգ գետի կամրջով, զարգացնում գրոհը եւ Կերչ քաղաքի ազատագրման մարտական գործողությունները: Գնդի հրամանատարությունը Ղազարյանին ներկայացնում է Սովետական Միության հերոսի կոչման: Սակայն բախտի դառը բերումով՝ Ղազարյանը հերոսի կոչման չի արժանացել, նրա կրցքին ամրացվել է «Կարմիր աստղի» շքանշան եւ, ի նշանավորումն այդ խիզախության, նրան 1944թ. ամռանը տրվել է մեկամսյա արձակուրդ՝ հարազատներին տեսակցելու համար:

1944թ. մայիսի սկզբներին, Սեւաստոպոլի ազատագրման թեժ մարտերից մեկում, նա կրծքավանդակից ծանր վիրավորվում է: Ապաքինվելուց մի քանի ամիս անց, կրկին վերադառնում է ռազմաճակատ, այս անգամ արդեն 1944թ. վերջերին առաջին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերի կազմում եւ՝ որպես դասակի հրամանատար մասնակցում Քյոնիգսբերգ (այսօր՝ Կալինինգրադ) քաղաքի գրավման մարտական գործողություններին: Ղազարյանը Մերձբալթյան ռազմաճակատի զորքերի հավաքական գնդի կազմում, 1945թ. հունիսի 24-ին, մասնակցել է նաեւ Հաղթանակի զորահանդեսին, որպես այն հազարավորներից մեկը, որը թշնամու գնդակից երկյուղ չի զգացել:

Պատերազմի հաղթական ավարտից հետո՝ 1947թ. զորացրվել եւ վերադարձել է հայրենի գյուղ: Աշխատել է Ծալկայի յուղ-պանրի գործարանում՝ որպես կաթնամթերքի ընդունման կետի վարիչ: Սակայն ինչ-ինչ պատճառներով 1949թ. մեկնել է Կալինինգրադի մարզ եւ Նեստերովսկի շրջանի Յասնայա Պոլյանա խորհրդային պետական տնտեսությունում (սովխոզում) աշխատել է գլխավոր անասնաբույժի տեղակալ, մի քանի տարի անց՝ նաեւ գլխավոր անասնաբույժ: Աշխատանքային գործունեությանը զուգահեռ, հեռակա կարգով, ավարտել է Լենինգրադի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտը եւ ստացել գիտական անասնաբույժի որակավորում:

Ս.Ղազարյանը կարճ ժամանակաշրջանում կարողանում է հաղթահարել բոլոր տեսակի դժվարությունները, հմտանում իր մասնագիտության մեջ եւ այդ տնտեսությունը վերածում օրինակելի ու եկամտաբեր տնտեսության:

1965թ. նա նշանակվել է Նեստերովսկի շրջանի գլխավոր անասնաբույժ եւ նույն խանդավառությամբ, շրջանում, գյուղմթերքների արտադրության բնագավառում, հասել զգալի հաջողությունների: Նրան 1975թ. շնորհվել է Ռուսաստանի Դաշնության վաստակավոր անասնաբույժի կոչում:

Աշխատանքի եւ պատերազմի վետերան Ստեփան Ղազարյանը, երկարամյա աշխատանքային գործունեության եւ հայրենիքին մատուցած ծառայությունների համար, պարգեւատրվել է «Կարմիր աստղի», «Հայրենական պատերազմի առաջին եւ երկրորդ աստիճանի», «Փառքի երրորդ աստիճանի», «Աշխատանքային կարմիր դրոշի», «Ժողովուրդների բարեկամության», «Պատվո նշան» շքանշաններով, մի շարք մեդալներով, որոնց թվում՝ «Կովկասի պաշտպանության համար», «Խիզախության համար» (2 անգամ), «Մարտական ծառայությունների համար», «Նովոռոսիյսկի ազատագրման համար», «Սեւաստոպոլի ազատագրման համար», «Քյոնիգսբերգի գրավման համար», «1941-1945թթ. Հայրենական պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» եւ հոբելյանական մեդալներով, բազմաթիվ պատվոգրերով ու շնորհակալագրերով:

Վախճանվել է 1991թ., 67 տարեկանում:

Փա՜ռք հերոսներին, ովքեր անձնազոհաբար պայքարեցին, իրենց լուման ներդրեցին ֆաշիզմի ջախջախման եւ մեծ Հաղթանակի կերտման գործում:

*ՌԱՖԻԿ ԱՎԵՏՅԱՆ*
*ՎԱՐԴԱՆ ԱՎԵՏՅԱՆ*

COVID - 19

# ՓԱԿ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԴԻՄԱԿ ԿՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԵՂԱՐԿՎԵՑ

## ԴԻՄԱԿ ԿՐԵԼԸ ՊԱՐՏԱԴԻՐ Է ՄԻԱՅՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

*Մայիսի 2-ից, Վրաստանի կառավարության որոշմամբ, դիմակի օգտագործումը պարտադիր կլինի միայն բուժհաստատություններում եւ հասարակական տրանսպորտում:*



Ինչպես կառավարության նիստում հայտարարեց վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, համապատասխան որոշումը կայացվել է ոլորտի մասնագետների, առողջապահության նախարարի հետ խորհրդակցությունների ընթացքում:

- Համավարակը բավական կայունացել է, իրավիճակը շատ հանգիստ է, ինչը թույլ է տալիս է՛լ ավելի մեղմացնել սահմանված կանոնակարգերը,- ասել է վարչապետը՝ հավելելով, որ հանվում է նաեւ դպրոցներում դիմակ կրելու պահանջը:

Իրակլի Ղարիբաշվիլին նշել է նաեւ, որ «կդիտարկեն համավարակի դինամիկան եւ կգործեն ըստ այդմ»:

# ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 515 ՄԻԼԻՈՆԸ

*COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում հասել է 515 947 746-ի: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 6 272 211-ը: Ապաքինվել է 470 754 694 մարդ:*




Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ հաստատվել է **83 437 158** դեպք: Այստեղ մահացածների թիվը **1 023 908** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **43 094 548**-ի, մահացածներինը՝ **523 975**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **30 524 183**, մահացել՝ **663 967** մարդ: **Ֆրանսիայում** կորոնավիրուսով վարակվել է **28 849 915**, վարակի հետեւանքով մահացել՝ **146 498** մարդ: Ֆրանսիային հաջորդում են Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը, Հ.Կորեան, Իտալիան ու Թուրքիան:

**Հայաստանում,** ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **422 877-ի**, մահացածներինը՝ **8 622-ի**, ապաքինվածներինը՝ **412 026-ի**:

**Ադրբեջանում** վարակվածների թիվը **792 599** է: Վարակից մահացել է **9 709,** ապաքինվել՝ **782 839** մարդ:

**Վրաստանում,** մայիսի 2-ի դրությամբ, համավարակի սկզբից առ այսօր վարակվել է **1 655 221,** մահացել՝ **16 811,** ապաքինվել՝ **1 637 293** մարդ:

*Մայիսի 2-ին, կորոնավիրուսով վարակման **51** նոր դեպքերից **36-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 5, Իմերեթիում՝ 3, Քվեմո Քարթլիում՝ 0, Շիդա Քարթլիում՝ 2, Գուրիայում՝ 2, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 0, Կախեթիում՝ 2, Մցխեթա-Մթիանեթիում՝ 0, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 0, Սամցխե-Ջավախեթիում՝ 1:***

***Մայիսի 2-ի տվյալներով, մահացել է 1 մարդ:***

# ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՀՐԱՊԱՐԱԿՎԻ ՇԱԲԱԹԸ ՄԵԿ ԱՆԳԱՄ



*Վրաստանի առողջապահության նախարարության որոշմամբ՝ Վրաստանում կորոնավիրուսի վիճակագրության վերաբերյալ տվյալներն այլեւս ամեն օր չեն հրապարակվի:*

Փոխարենը՝ վարակվածների, մահերի եւ ապաքինման մասին տեղեկատվությունը կամփոփվի շաբաթը մեկ անգամ՝ երեքշաբթի օրերին:

«Քանի որ վարակվածության մակարդակի համաճարակային պատկերը նվազում է, տվյալների հրապարակման հաճախականությունը կփոխվի: Տվյալները, որոնք նախկինում հրապարակվում էին ամեն օր՝ վարակվածների թվի, մահերի, դրական ցուցանիշների վերաբերյալ, կհրապարակվեն շաբաթը մեկ անգամ՝ երեքշաբթի օրերին՝ ընթացիկ միտումներն ավելի լավ վերլուծելու համար»,- պարզաբանել է առողջապահության փոխնախարար Թամար Գաբունիան:

# ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՁԵ. «ԱՅՍՕՐ ԳՐԻՊԻ ՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՆ»

*Վրաստանի հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեի հայտարարությամբ՝ գրիպի վարակի տարածումը երկրում զգալիորեն գերազանցեց կորոնավիրուսին:*

- Ինչպես գիտեք, կորոնավիրուսի համավարակի շրջանում, վիրուսների տարածման դինամիկան որոշակի փոփոխությունների է ենթարկվել: Մինչեւ 2020 թվականը գրիպը գրեթե գոյություն չուներ, քանի որ նոր կորոնավիրուսը «ճնշում էր» գրիպին եւ ավելի քիչ խուճապի մատնում բնակչությանը: 2021-ին այս դինամիկան շարունակվեց: 2022-ին կորոնավիրուսի նահանջի հետ մեկտեղ այլ վիրուսների տարածման դինամիկան զգալի աճել է, - նշեց Ամիրան Գամկղրելիձեն՝ հավելելով, որ հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը տարբեր եղանակներով վերահսկում է շնչառական վիրուսի տարածումը:

- Փաստը ցույց է տալիս, որ այժմ գրիպի վիրուսի տարածումը զգալիորեն գերազանցում է կորոնավիրուսի տարածմանը, ավելի շատ գրիպի վիրուսն է շրջանառվում, քան կորոնավիրուսի «Օմիկրոն» շտամը, բայց դա խուճապի տեղիք չի տալիս,- ընդգծեց Ամիրան Գամղրելիձեն:

Անդրադառնալով երկիր ներկրվող պատվաստանյութի թեմային՝ վարակաբանը նշեց, որ Վրաստանը պատվիրել է կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի նոր չափաբաժին՝ 5-11 տարեկան երեխաների համար: Նրա խոսքով՝ այս քայլը եւս ուղղված է Վրաստանում համավարակի հաղթահարմանը եւ մինչեւ հունիս բնակչության 70 տոկոսի պատվաստումն ապահովելուն:



*Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

# ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

## ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ԵՆ ԱՎԵԼԱՑՎԱԾ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

*Թբիլիսիի քաղաքապետարանը մշակել է օրենսդրական փոփոխությունների փաթեթ՝ ուղղված մայրաքաղաքում երթեւեկության բարելավմանը, փոփոխություններին, որոնք պետք է ներառվեն Վրաստանի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում:*

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, մայրաքաղաքում տրանսպորտի երթեւեկության հետ կապված լուրջ հիմնախնդիրներ են ծագել:

- Սրանք կայանման հետ կապված խնդիրներ են՝ մեքենաների կայանումը այն վայրերում, որտեղ դա արգելված է, հաշմանդամություն ունեցող անձանց համար հատկացված տեղի զբաղեցում, (M1 անվանակարգ) տաքսիների համար հատկացված կայանատեղերի զբաղեցում եւ այլն,- նշեց քաղաքապետը եւ հավելեց, քանի որ մեր տրանսպորտային քաղաքականությունը վերաբերում է այս ամենին, տուգանքների ավելացման առումով օրենքում որոշակի փոփոխություններ են կատարվելու:

- Իհարկե, ոչ ոք գոհ չէ տուգանքներից, բայց թվում է, որ այն անհրաժեշտ է քաղաքում կարգուկանոնի համար,- ասաց Կախա Կալաձեն:

Օրենսդրական փոփոխությունների փաթեթի համաձայն՝ «Կանգառ չկա» եւ «Կայանումը արգելված է» ցուցանակների տարածքում օրենքը խախտելու դեպքում, տուգանքը 10 լարիից կդառնա 50 լարի: Հետիոտնային հատվածում (ծանվահիրապարակում) կայանելը կամ հեծանվահիրապարակում շարժվելը, նախկինում 50 լարի տուգանքից, կհասցվի 100 լարիի: Տուգանքը չվճարելու դեպքում՝ այն կկրկնապատկվի, ինչպես նաեւ կկրկնապատկվի տոկոսը, որը ներկայումս կազմում է 100 լարի: 100 լարի տուգանքը, 50 լարիի փոխարեն, կհանգեցնի տաքսիների կայանատեղիում կայանելու համար, ինչպես նաեւ տուգանքը չվճարելու դեպքում, այն կկրկնապատկվի. Ավտոմեքենան ճանապարհին թողնելու դեպքում՝ անձը կտուգանվի 100 լարի, 50 լարիի փոխարեն, իսկ տուգանքը չվճարելու դեպքում՝ 200 լարի: Թբիլիսիում առանց կայանման վճարի կայանելու համար՝ տուգանքը ներկայումս կազմում է 10 լարի, իսկ փոփոխություններից հետո՝ այն կդառնա 50 լարի. Թբիլիսիում էլեկտրական մեքենաների լիցքավորման վայրում կայանելու համար տուգանքը կազմում էր 50 լարի, իսկ փոփոխությունների դեպքում՝ տուգանքը կկրկնապատկվի: Հաշմանդամություն ունեցող անձանց համար հատկացված ավտոկայանատեղիում կայանելու համար տուգանքը 50 լարի էր, իսկ փոփոխությունները նախատեսում են այն հասցնել 100 լարիի: Ինչպես եւ նախորդ, այս դեպքերում նույնպես տուգանքը չվճարելու պարագայում, տոկոսները կկրկնապատկվեն: Թբիլիսիի սակրեբուլոյի կողմից սահմանված կայանման մեկ այլ կանոնի խախտումը նախկինում պատժվում էր 10 լարի տուգանքով, իսկ փոփոխություններից հետո՝ այն կդառնա 50 լարի:



Նախագծով, Թբիլիսիի մունիցիպալիտետի վարչական սահմաններում կայանման վայրում, մունիցիպալիտետի կողմից սահմանված տրանսպորտային միջոցներից բացի, այլ տեսակի տրանսպորտային միջոցի կայանումը կհանգեցնի տուգանքի՝ 100 լարիի չափով, իսկ տրանսպորտային միջոցների կայանման այլ կարգի խախտումը՝ 50 լարիի:

Փոփոխությունների համաձայն՝ երթուղային տրանսպորտային միջոցների երթեւեկության համար հատկացված հատուկ գծում («BUS LANE») տրանսպորտային միջոցը կանգնեցնելը, բացի տրանսպորտային միջոցից (տաքսի (M1 կատեգորիա), որն ունի հատուկ թույլտվություն քաղաքապետարանի կողմից, կտուգանվի 100 լարիի չափով:

Բացի այդ, մունիցիպալիտետը սահմանում է ավտոբուսի գծով (M1 անվանակարգ) տաքսիների անցման վայրերն ու պայմանները. Տուգանքը դիմապակու վրա տեղադրելու կարգը կչեղարկվի եւ կկազմվի էլեկտրոնային արձանագրություն, իսկ արձանագրությունը ստանդարտ կարգով կուղարկվի իրավախախտողին, ինչպես նաեւ կուղարկվի SMS հաղորդագրություն. Եթե մեքենան կայանված է մայթին, այն անմիջապես կտարհանվի. Մարդատար ավտոմեքենայի համար նախատեսված կայանատեղիում բեռնատարի, ավտոբուսի կայանումը կհանգեցնի 100 լարի տուգանքի, իսկ տուգանքը չվճարելու դեպքում՝ 200 լարի. Վարչական իրավախախտումների դեպքում քաղաքապետարանն իրավասու է սահմանել՝ հատուկ պահպանվող ավտոկայանատեղի տեղափոխվող տրանսպորտային միջոցի տեղափոխման եւ պահպանման, ինչպես նաեւ անիվների հատուկ միջոցներով արգելափակման վճարը:

***ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ***

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՎ ՄԵԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ «ԲՐԵՆԴՆ» Է»




*Մայիսի 4-ին, Հայաստանի Ազգային ժողովում հարցուպատասխանի ժամանակ, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը խոսելով մայրաքաղաքում անցկացվող հանրահավաքների մասին, հայտարարեց, որ այսօր ժողովրդավարությունը Հայաստանի թիվ մեկ միջազգային «բրենդն» է, եւ իշխանություններն այդ «բրենդը» պահպանելու են:*

Անդրադառնալով ընդդիմության փողոցային ցույցերին՝ վարչապետն ասաց, որ ներկայիս ընդդիմություն՝ նախկին իշխանությունները ժամանակին ծաղրում էին իրենց քայլելու համար:

- Ընդդիմության մեր հարգելի գործընկերները մեզ ծաղրում էին քայլելու համար, իսկ իրենք, պտույտներից հետո, որոշեցին քայլել: Իրենք մեզ ծաղրում էին ուսապարկ կրելու համար, քաղաքի խանութներում ուսապարկ, ցավոք, մնացել է, պարզապես գներն են բարձրացել, որովհետեւ նորահայտ կլիենտուրան փողի խնդիր չունի: Մեր Քայլոյին էին ծաղրում, հիմա մեր քաղաքում անտուն շների գինն է բարձրացել,- շեշտեց Նիկոլ Փաշինյանը:

- Դա չի նշանակում, որ չկան գծեր, որոնց դեպքում ժողովրդավարությունը գործում է իր օրինական, իրավական ինստիտուցիոնալ մեխանիզմներով, ամբողջ թափով եւ խստությամբ: Ես ուզում եմ՝ մենք ժողովրդավարությունը երբեք ու երբեք չմեկնաբանենք՝ որպես իշխանության կամ պետության թուլություն,- ասաց նա:

## ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՒՅՆ ՕՐԳԱՆԻԶՄԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍՆ ԵՆ



*Ապրիլի 30-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցեց արտախորհրդարանական քաղաքական ուժերի հետ համագործակցության խորհրդակցական ժողովի հերթական նիստին:*

Նիստին ներկա էին Պահպանողական կուսակցության ղեկավար Միքայել Հայրապետյանը, «Արդար Հայաստան» կուսակցության ղեկավար Նորայր Նորիկյանը, Հայաստանի եվրոպական կուսակցության ղեկավար Տիգրան Խզմալյանը, Հայաստանի Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցության նախագահ Լեւոն Շիրինյանը, «Միասնական հայրենիք» կուսակցության նախագահ Մհեր Տերտերյանը, «Ինքնիշխան Հայաստան» կուսակցության ղեկավար Դավիթ Սանասարյանը, Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան կուսակցության Հայաստանի վարչության ատենապետ Սեդրակ Աճեմյանը եւ «Ուժը հայրենյաց» կուսակցության նախագահ Տիգրան Արզաքանցյանը:

Իր խոսքում Հայաստանի վարչապետը նշեց, որ իշխանությունն ու ընդդիմությունը նույն օրգանիզմի անբաժան մասն են, եթե չկա ընդդիմություն, իշխանությունը մի քիչ այլ հասկացություն է դառնում:

Կառավարության ղեկավարը նկատեց, որ կայացած ժողովրդավարական երկրներում իշխանությունն ու ընդդիմությունը սերտ համագործակցում են, սակայն, ցավոք, Հայաստանում այդպես չէ եւ, ըստ էության, այդպես չի էլ եղել երբեք:

- Եթե կարողանանք ճիշտ տրամաբանությամբ կառուցել մեր քաղաքական կյանքը, այս աշխարհայացքների եւ գաղափարների շուրջ կարող են ձեւավորվել քաղաքական ուղղություններ կամ ընդհակառակը՝ քաղաքական մի ուղղությունը գերակշռի մյուս ուղղության նկատմամբ ու արդեն այս մեծ օրակարգերի ներսում տեղի կունենան քաղաքական ուղղությունների ձեւավորումներ,- նշեց վարչապետը:

## ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ



*Մայիսի 2-6-ին, Հայ-ամերիկյան ռազմավարական երկխոսության նիստին մասնակցելու համար, Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն աշխատանքային այցով գտնվում էր Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այցի շրջանակներում՝ Արարատ Միրզոյանը Վաշինգտոնում հանդիպում ունեցավ ԱՄՆ-ի պետքարտուղար Էնթոնի Բլինկենի հետ: Հանդիպման նպատակը ԱՄՆ-ի եւ Հայաստանի միջեւ ռազմավարական երկխոսության մեկնարկն էր:*

Պետքարտուղարը պատրաստակամություն հայտնեց ամրապնդել երկկողմ հարաբերությունները՝ ընդհանուր ժողովրդավարական արժեքներին համահունչ եւ շարունակել համագործակցությունը Հայաստանի բարեփոխումների օրակարգում:

Հանդիպմանը Արարատ Միրզոյանը եւ Էնթոնի Բլինկենը ստորագրեցին Հայաստանի եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների միջեւ «Քաղաքացիական միջուկային էներգիայի ոլորտում համագործակցության վերաբերյալ» փոխըմբռնման հուշագիրը:

Հանդիպմանը քննարկվեց ժողովրդավարական բարեփոխումների, օրենքի գերակայության եւ կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի առաջընթացը: Խոսվեց նաեւ Հայաստանի եւ նրա հարեւանների միջեւ ընթացող երկխոսության մասին:

Էնթոնի Բլինկենը շնորհակալություն հայտնեց հայ գործընկերոջը՝ Հայաստանի ցուցաբերած ճկունության համար եւ կոչ արեց շարունակել ուղիղ բանակցությունները Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ: Էնթոնի Բլինկենն ընդգծեց նաեւ Միացյալ Նահանգների պատրաստակամությունը՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր, աջակցելու Հայաստանին եւ Ադրբեջանին՝ հասնելու կայուն խաղաղության եւ բարգավաճման:

ԱՄՆ այցի շրջանակներում՝ Արարատ Միրզոյանը հանդիպում ունեցավ նաեւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) կառավարիչ Սամանթա Փաուերի հետ:

## ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ. ԿԱՅԱՑԱՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԸ

*Երեւանում անցկացվեց Հայաստան-Եվրամիություն (ՀՀ-ԵՄ) Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) ներքո ստեղծված ՀՀ-ԵՄ Գործընկերության կոմիտեի երրորդ նիստը, որը ՀՀ-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի՝ 2021թ. մարտի 1-ին ուժի մեջ մտնելուց հետո, առաջին հանդիպումն էր: Գործընկերության կոմիտեի նիստի ընթացքում քննարկվել է համաձայնագրի կատարման ընթացքը:*

Քննարկելով ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ը իրականացման ընթացքը՝ կողմերը կենտրոնացան իրավունքի գերակայության, այդ թվում՝ անկախ եւ արդյունավետ արդարադատության համակարգի կարեւորության, կոռուպցիայի դեմ պայքարի եւ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի վրա:

Հանդիպման ավարտին՝ Գործընկերության կոմիտեն քննարկել է Արեւելյան գործընկերությանը եւ տարածաշրջանային զարգացումներին առնչվող հարցեր:

Հանդիպումը համանախագահել են Հայաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանը եւ Արտաքին գործողությունների եվրոպական ծառայության Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի հարցերով կառավարող տնօրենի տեղակալ Լյուկ Դեւինը:

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՈՒՇԱՄԵԴԱԼԸ՝ ՇԻՐԱԿ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ



***Ապրիլի 26-ին, Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, Սփյուռքի հետ կապերի ամրապնդման գործում ներդրած նշանակալի ավանդի համար, Հայաստանի Ազգային ժողովի նախագահի հուշամեդալով պարգեւատրեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Շիրակ Թորոսյանին:***

***Նշենք, որ ծնունդով ախալքալաքցի Շիրակ Թորոսյանը Ազգային ժողովի հինգ գումարումների պատգամավոր է:***

## ԿՐԿՆԱՊԱՏԿՎԱԾ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ՝ ԱՏԵՍՏԱՎՈՐՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

***Հայաստանում արդեն 470-ից ավելի ուսուցիչ կամավոր ատեստավորման արդյունքում հունիսին կստանա կրկնապատիկի չափով աշխատավարձ: Այդ մասին ասաց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Նա տեղեկացրեց, որ մյուս ուսուցիչների համար, սկսած այս տարվա ամռանից, ատեստավորման գործընթացը կբացվի: Վարչապետը հույս հայտնեց, որ մնացած ուսուցիչները կօգտվեն այդ հնարավորությունից:***

***- Դա արվում է նրա համար, որ մենք բոլորս՝ կառավարությունը, ծնողները, երեխաները համոզվեն, որ դասավանդում են պատրաստված որակավորում ունեցող ուսուցիչներ: Խնդիրն այն չէ, որ մենք կասկածում ենք ուսուցիչների մասնագիտական որակի մեջ: Պարզապես մենք հնարավորություն ենք տալիս, որ ուսուցիչները սեփական որակավորման մակարդակը բարձրացնելու խթան ունենան,- ասաց վարչապետը:***

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՒՄ Է ԿԱՆԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶՈՐԱՑՄԱՆ ՀԱՐԹԱԿ

***Հայաստանի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության, էկոնոմիկայի նախարարության եւ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) համաֆինանսավորմամբ ստեղծվում է Կանանց ձեռնարկատիրության եւ զբաղվածության զարգացման հարթակ:***

***Հայաստանի տնտեսական կյանքում կանանց աշխատուժի մասնակցությունն ավելի ցածր է, քան տղամարդկանցը՝ աշխատունակ տարիքի կանանց 51,4 տոկոսն է միայն աշխատուժի մաս կազմում, մինչդեռ տղամարդկանց պարագայում այդ թիվը 70,6 տոկոս է:***

## «ՄԻՍՍ ԱՊՀ 2022» ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ ԵՐԵՎԱՆՈՒՄ

***«Միսս ԱՊՀ 2022» միջազգային գեղեցկության մրցույթի եզրափակիչ փուլն այս տարի կանցկացվի հունիսի 15-ին, Ա.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում:***

***Մրցույթին մասնակցելու համար Հայաստան կժամանեն ինչպես ԱՊՀ անդամ երկրների, այնպես էլ՝ Արեւելյան Եվրոպայի մի շարք պետություններից (ընդհանուր՝ 19 երկրից) 18-25 տարեկան 25-30 գեղեցկուհիներ, որոնք հաղթել են իրենց երկրներում կայացած ընտրական մրցույթներում:***

ՏՐԱՆՍՊՈՐՏ

# ԼՐԱՑՈՒՑԻՉ ՉՎԵՐԹԵՐ՝ ԵՐԵՎԱՆԻ ԵՎ ԲԱԹՈՒՄԻԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

***Ինչպես տեղեկացրել է FLYONE ARMENIA ավիաընկերությունը, մայիսի 1-ից սկսվել են Երեւան -Թբիլիսի-Երեւան երթուղով կանոնավոր ուղիղ չվերթերը:***

Երեւան-Թբիլիսի-Երեւան երթուղով չվերթերը կիրականացվեն «Զվարթնոց» միջազգային օդանավակայանից դեպի Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու անվան միջազգային օդանավակայան:

Թռիչքները կիրականացվեն շաբաթական 4 անգամ՝ երկուշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ եւ կիրակի օրերին:

Հունիս ամսից նախատեսվում է ավելացնել չվերթերի քանակը:

Լրացուցիչ չվերթեր են նախատեսվում նաեւ Բաթումիի ուղղությամբ:

Մասնավորապես, Վրաստանի երկաթուղին մայիսի 6-15-ը լրացուցիչ չվերթեր կիրականացնի դեպի Բաթումի:

Տոմսերը կարելի է ձեռք բերել՝ ticket.railway.ge կայքի օգնությամբ, արագ վճարման սարքով, Վրաստանի երկաթուղու տոմսարկղում, Վրաստանի երկաթուղու գործընկեր ընկերությունների միջոցով:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

# ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԳՆԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ

***Վրաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ 2022 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի գների ինդեքսը (RPPI), նախորդ եռամսյակի համեմատ, աճել է 4,2 տոկոսով, իսկ տարեկան աճը կազմել է 3,4 տոկոս:***

Հրապարակված տվյալների համաձայն՝ 2020 թվականի միջին ցուցանիշի համեմատ ցուցանիշն աճել է 13,1 տոկոսով:

«RPPI»-ի ծածկույթը սահմանափակվում է Թբիլիսիով եւ ընդգրկում է միայն բնակելի անշարժ գույքի նոր շուկան ինչպես բազմահարկ բնակարանների, այնպես էլ՝ առանձնատների հատվածները:

Ընթացիկ տարվա առաջին եռամսյակում, նախորդ եռամսյակի համեմատ, 5,4 տոկոսով աճել են բնակարանների, 2 տոկոսով՝ սեփական տների գները: «Կանաչ կարկասով» բնակարանի 1 քառ. մետրի գինը հունվարին, փետրվարին եւ մարտին Թբիլիսում կազմել է 3 077 լարի (հազար դոլարից ավելի), ինչը 127 լարիով (շուրջ 42 դոլարով) ավելի է, քան նախորդ եռամսյակում:

«Սպիտակ կարկասով» բնակարանի 1 քառ. մետրի արժեքը կազմել է 2 664 լարի (ավելի քան 879 դոլար), ինչը 64 լարիով (ավելի քան 21 դոլարով) ավելի է, իսկ «սեւ կարակասով» բնակարանի 1 քառ. մետրի գինը կազմել է 2 280 լարի (ավելի քան 752 դոլար), ինչը 70 լարիով (ավելի քան 23 դոլարով) ավելի է, քան նախորդ եռամսյակում: «Սաքստատի» տվյալներով՝ բնակարաններն ամենից թանկ արժեն մայրաքաղաքի Մթածմինդայի, Վակեի եւ Կրծանիսիի շրջաններում: Մթածմինդայում բնակարանի 1 քառ. մետրի արժեքը կազմում է 4 458 լարի (ավելի քան 1,4 հազար դոլար), Վակեում՝ 3 690 լարի (ավելի քան 1,2 հազար դոլար), իսկ Կրծանիսիում՝ 3 143 լարի:

Հիշեցնենք, որ Թբիլիսիում բնակարանների վարձակալման գները կտրուկ բարձրացել են: Ոլորտի մասնագետները շուկայում շարժը կապում են ռուսուկրաինական պատերազմի հետեւանքով երկու երկրներից մարդկանց արտահոսքի հետ:

ՀԻՇԱՏԱԿ

# ՄԱՀԱՑԵԼ Է ԼԵԳԵՆԴԱՐ ՎԱԼԵՐԻ ՔՈՉԱՐՈՎԸ, ՎՐԱՑԱԿԱՆ «ԲԻԹԼԶԻ» ՀԻՄՆԱԴԻՐԸ...

***Վրացական «Բիթլզի» հիմնադիր. այսպես էին ճանաչում երաժիշտ, կիթառահար, վոկալիստ Վալերի Քոչարովին, ում Թբիլիսին հրաժեշտ տվեց մայիսի 2-ին:***



Մինչդեռ հաջորդ օրը, մայիսի 3-ին, լեգենդար երաժիշտը նշելու էր իր 74-ամյակը...

Վալերի Քոչարովը ծնվել էր Թբիլիսիում, 1948 թվականին: Բեմական ակտիվ գործունեությունը սկսել էր անցած դարի 70-ականներին: Նա տարբեր, այդ թվում՝ «Կվադրատ», Cold Flame եւ The Blitz խմբերի անդամ ու հիմնադիր էր: Հենց The Blitz-ն էր Կովկաս բերել այդ տարիներին արգելված, բայց այդքան պաշտելի ռոքը: Վրացական ռոք երգերից բացի, խումբը շարունակում էր հանրայնացնել The Beatles խմբի երգերը: Հնչեղ համերգները հազարավոր մարդկանց ներկայությունն էին ապահովում, իսկ 1989 թվականին անգլիական Լիվերպուլում կայացած «Բիթլզ» խմբի նմանակման ավանդական մրցույթում, բրիտանական քառյակի լավագույն արտաքին տեսքի հայորդի եւ երաժշտական ընդօրինակման համար, Վալերի Քոչարովի «Բլից» խումբն արժանացել էր գլխավոր մրցանակի: Թբիլիսիի կենտրոնում նա հիմնել էր երաժշտական իր ակումբը, ուր աշխատեց մինչեւ կյանքի ավարտը:

Վալերի Քոչարովի գործն արդեն երկար ժամանակ շարունակում է նրա որդին՝ Նիկա Քոչարովը: Նիկան նույնպես Վրաստանում հայտնի ռոք երաժիշտ է եւ մենակատարը Nika Kocharov & Young Georgian Lolitaz խմբի, որը 2016 թվականին Վրաստանը ներկայացրել է «Եվրատեսիլ» երգի միջազգային մրցույթ-փառատոնում:

***«Վրաստան» թերթը իր ցավակցությունն է հայտնում հանգուցյալի որդուն՝ Նիկա Քոչարովին, հարազատներին ու մերձավորներին:***

ՍՊՈՐՏ

## ԵՐԿՈՒ ՈՍԿԵ ԵՎ ՄԵԿ ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼ ՁՅՈՒԴՈՅԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Բուլղարիայի մայաքաղաք Սոֆիայում անցկացվող ձյուդոյի Եվրոպայի առաջնությունում վրաց ձյուդոյիստներն իրենց ակտիվում գրանցեցին երկու ոսկե եւ մեկ բրոնզե մեդալներ: Մայրցամաքի չեմպիոնի կոչումը նվաճեցին Լուկա Մաhուրաձեն (90 կգ քաշային կարգ) եւ Տատո Գրիգալաշվիլին (81 կգ քաշային կարգ), իսկ Էթեր Լիպարտելիանին (57 կգ)՝ զբաղեցրեց երրորդ տեղը:

Մրցաշարում անհաջող հանդես եկան Հայաստանի մարզիկները: Հայաստանի ներկայացուցիչներ, 73 կգ քաշայիններ Արսեն Ավետիսյանը եւ Ֆերդինանդ Կարապետյանը անմասն մնացին խաղարկված մեդալներից:

## ՖՈՒՏԲՈԼԻ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐԸ ԵՎՐԱԳԱՎԱԹՆԵՐԻ ՄՐՑԱՇԱՐԵՐԻՆ ՉԵՆ ՄԱՍՆԱԿՑԻ

ՈՒԵՖԱ-ն հերթական պատժամիջոցներն է կիրառել ռուսաստանյան ֆուտբոլային ակումբների դեմ:

ՈՒԵՖԱ-ն ռուսաստանյան ակումբներին արգելել է մասնակցել 2022/23 մրցաշրջանի եվրագավաթային մրցաշարերին: Ինչպես նաեւ Ռուսաստանի կանանց եւ տղամարդկանց թիմերին թույլ չի տվել մասնակցել Ազգերի լիգային եւ Եվրոպայի 2022 թվականի առաջնությանը: ՌԴ ֆուտբոլի ֆեդերացիան բողոքով դիմել է Միջազգային սպորտային արբիտրաժային դատարան:

# ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Խելագար: 8.Դժվարանցանելի, ընդարձակածավալ, փշատերեւ անտառային գոտի: 10.Թանգարան Փարիզում: 11.Զարմանքի արտահայտություն: 13.Վրաց «Շինարար» թագավոր: 14.Պետություն Արեւելյան Եվրոպայում: 16.Էլեկտրոնիկայի ֆիրմա: 17.Թատերական անձնավորում: 18.Թթի թանձր հյութ: 20.Անգլիական ազնվական տիտղոս: 21.Աշակերտ, ուսանող: 22.Ընկճված, հուսալքված: 26.Ավագ քահանա: 28.Կտոր, մաս: 31.Ոչ լայն: 32.Գին, արժեք: 34.Արջուկ «Թուխը»: 35.Բոլշեւիկյան թերթ: 36.Հայ իշխան ... Ամրամ: 38.Նավի խոհարար: 41.Ղավուրմա: 43.Ժողովրդական վրիժառու: 45.Ոտքի ծալվելու տեղը: 48.Ծուռ, թեք: 49.Ժողովրդական թատրոնի եւ գրականության տեսակ XIV-XVI դդ. արեւմտաեվրոպական երկրներում: 52.Սթափ: 53.Ելումուտ անելու բացվածք: 54.Դերասանուհի Դեմի ...: 55.Նավակը վարելու գործիք: 56.Արու ոչխար: 57.Վրացու «հորեղբայրը»: 58.Վիշնուի ավատարը, հին հնդկական Այոդհյա քաղաքի լեգենդար թագավորը: 59.Պետություն Ասիայում՝ Հնդկական օվկիանոսում ... Լանկա: 60.Դատարկ, ունայն:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ձայնային ինֆորմացիայի հաղորդման եւ ընդունման սարք: 2.Դունչ: 3.Գերի, ծառա: 4.Գնահատող հանձնաժողով: 5.Ծխախոտի անուն: 7.Բանաստեղծ, պատմաբան Ղեւոնդ ...: 9.Մարդու օրգան: 12.«Տատիկն ... մի ուլիկ»: 15.Բեմահարթակով փոքր ռեստորան: 19.Սեղանի խաղ: 23.Աթոռի կռնակ: 24.Պատշաճ, ինչպես հարկն է: 25.Հավը՝ տապակած: 27.Թել, զսպանակ: 29.Եվրամիության անդամ երկրների տարադրամը: 30.Ինչպե՞ս: 32.Եկեղեցական անոթ, որի մեջ լցնում են գինի՝ պատարագի ժամանակ նվիրագործելու համար: 33.Փիլիսոփա, մարքսիզմի հիմնադիր ... Մարքս: 37.Թել մանելու գործիք, ճախարակ: 39.Հասարակական տրանսպորտի սպասատեղ: 40.Գրող ... Սեւակ: 41.Վարակիչ հիվանդություն: 42.Հեծելազոր: 44.Երկկենցաղ կենդանի: 46.Իսրայելական ինքնաձիգ: 47.Վրաստանում X դարից միջին չափի խեցե սպասք: 50.Տարին 12-ի բաժանող միավոր: 51.Ցուցական դերանուն:

***Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱՐԲԵԿՅԱՆԸ***

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Սենեգալ: 4.Դարեջան: 9.Նարգիզ: 10.Ադամ: 12.Շաքե: 14.Եդեմ: 17.Արտշին: 18.Նենե: 19.Լճակ: 21.Կակա: 24.Սունելի: 25.Նամուս: 27.Մալի: 28.Տա: 30.Րիա: 31.Կկու: 32.Թաթոս: 34.Շա: 36.Եզո: 37.Սանիկ: 38.Երես: 40.Գավ: 41.Ակ: 42.Ոսպ: 43.Ակոս: 44.Կասպից: 46.Սեդա: 47.Շեշտ: 49.Դամա: 52.Սազ: 53.Նանի: 54.Բամիա:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Սարյան: 2.Նանսեն: 3.Գուրգեն: 5.Աղայան: 6.Երաշտ: 7.Նովենց: 8.Ազրոյան: 11.Մաշիկ: 13.Քի: 15.Դերենիկ: 16.Մելիք: 20.Կամ: 21.Կուլիս: 22.Ասիա: 23.Արտաշես: 24.Սերգեենկո: 26.Մարոկկո: 29.Թան: 31.Կոկոս: 32.Թավ: 33.Թիակ: 35.Ասպրամ: 37.Սա: 39.Ռոպե: 40.Գրիշա: 43.Արտեմ: 45.Ցե: 48.Եկա: 49.Դա: 50.ԱՆ: 51.Մի: 52.Սի:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445